

ՏԻԿ. ԱՕՅԻԱ ԴԱՆԻԷԼ-ԲԷԿԻ ՃԱՌԸ

(Արասանգած ներսիսեան դպրոցում)

Մի խումբ երախտապարտ հայ կանանց կողմից են ողջունում եմ այսօրվայ կուլտուրական տօնը և անհուն բերկրանքով խոնարհվում այն մեծ մարդու յիշատակի առաջ, որի գրեթե որպէս լուսաւորութեան ջահեր առաջնորդել են մեզ այս 1500 տարիներէ ընթացքում:

Ես ողջունում եմ մայրենի բարբառը, որի դիւթիչ հնչիւնները սիրելի են դարձրել մեզ գիրն ու գիտութիւնը:

Տառերի գիւտը և տպագրութիւնը, կուլտուրական այդ զօրեղ գործօնները, զարկ տալով մեր լեզուին, դպրոցին, գրականութեանը, մամուլին՝ առաջնորդել են մեզ դէպի լոյս, դէպի քաղաքակրթութիւնն Բայց... խաւարը դեռ թանձր է և մենք հայունիքս ծարաւի ենք լոյսի:

Երբ Մեսրոպեան ջահերը կողողեն մեր աշխարհը, կը լուսաւորեն մեր Տիտքն ու հողին, մենք, հայ կանայքս, կը գտնենք մեր ուղին և անշեղ կընթանանք դէպի առաջ, դէպի լուսաւոր տարագան: